ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԳՅՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անտոնյան

Ի պատասխան Ձեր 06.07.2020թ. հ.20/66485 գրության՝ հայտնում եմ.

Համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության կողմից ներկայացված տեղեկատվության՝ Երևանի քաղաքապետի 14.11.2018թ. հ.3411-Ա որոշման հիման վրա ստեղծված հանձնաժողովի կողմից իրականացվել է Արցախի 4-րդ նրբ. հ.10 շենքի բնակիչների վերաբնակեցման գործընթաց: Նշված շենքի թվով 13 ընտանիքներ, այդ թվում՝ Ռիտա Միրզոյանցը, հրաժարվել են մինչև Սիսակյան փողոցի հ.3 շենքի կառուցումը տեղափոխվել վարձակալական հիմունքներով բնակարան և ազատել իրենց բնակարանները:

Ներկայումս Երևան քաղաքում առկա քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման համար անհրաժեշտ նպատակային ֆոնդ առկա չէ, ինչի պարագայում Երևանի քաղաքապետարանի կողմից ամբողջական վերաբնակեցում հնարավոր չէ իրականացնել:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Արցախի 4-րդ նրբ. հ.10 շենքի հ.413 բնակարանի մասով առկա է դատական վեճ, և վերջնական ուժի մեջ մտած դատական ակտ առկա չէ: Ռիտա Միրզոյանցի վերաբնակեցման հարցը վերոնշյալ հանձնաժողովի կողմից հնարավոր կլինի քննարկել ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի առկայության պարագայում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ